«ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՆ ՏՈՒՆ» ՊՈԱԿ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-1-ՄՏ-9

ք. Երևան « 01 » փետրվարի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ֆոտոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.5 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Երևանի մանկան տուն» ՊՈԱԿ-ին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 723829.6 (Յոթ հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քսանինը դրամ վաթսուն լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության __2__ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

...անքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել ...ամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Ֆոտոն» ՍՊԸ
ք. Երևան Կառավարական տուն 3	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի փ.14շ., բն.21
ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 90036001
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 163008104867	Հ/Հ 16044050085000
Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան /ստորագրություն/ Կ.Տ	Տնօրեն ..... Ն. Պետրոսյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված
« 01» փետրվարի 2018 թ. կնքվ
«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-1-ՄՏ-9» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը***	ժամկետը**
3	15331142	Կաղամբ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	87	104478.3	1200.9	ք. Երևան Արմենակ Արմենակյանի փող., 119	1200.9	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.
5	15331166	Վարունգ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	134	41084.4	306.6	ք. Երևան Արմենակ Արմենակյանի փող., 119	306.6	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.
7	15331171	Պղպեղ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	166	16965.2	102.2	ք. Երևան Արմենակ Արմենակյանի փող., 119	102.2	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.
8	15331167	Կանաչի խառը	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	988	25292.8	25.6	ք. Երևան Արմենակ Արմենակյանի փող., 119	25.6	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.
10	15331160	Դդմիկ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	117	11957.4	102.2	ք. Երևան Արմենակ Արմենակյանի փող., 119	102.2	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.
14	15331163	Բազուկ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	123	40860.6	332.2	ք. Երևան Արմենակ Արմենակյանի փող., 119	332.2	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.
28	03222100	Բանան	Էկվադոր	Ներկայացվում է ստորև	կգ	578	428298	741	ք. Երևան Արմենակ Արմենակյանի փող., 119	741	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.
37	03222134	Սալոր	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	194	4966.4	25.6	ք. Երևան Արմենակ Արմենակյանի փող., 119	25.6	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.
39	3222133	Կեռաս	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	447	34284.9	76.7	ք. Երևան Արմենակ Արմենակյանի	76.7	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև

									փող., 119		20.12.2018թ.
121	15617000	Ցորենածավար	Ա. Ձ. Գևորգ Մանասերյան /ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	186	4761.6	25.6	ք. Երևան Արմենակ Արմենակյանի փող., 119	25.6	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.
123	15619000	Հաճար	Ա. Ձ. Գևորգ Մանասեր /ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	234	2995.2	12.8	ք. Երևան Արմենակ Արմենակյանի փող., 119	12.8	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.
125	15613350	Վարսակածավարի փաթիլներ (հերկուլես)	Պրիմա ՓԲԸ/ ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	308	7884.8	25.6	ք. Երևան Արմենակ Արմենակյանի փող., 119	25.6	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**** Գնման ժամանակացույցով սահմանված են առավելագույն քանակները: Դրանք կարող են փոփոխվել՝ պայմանավորված շահառուների թվաքանակի փոփոխությամբ:*

Բանջարեղեն			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Մթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
3	15331142	Կաղամբ	Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: 55% -վաղահաս, 45%- միջահաս: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած:Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի:Մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, ցրտահարված գլուխների մթերումը չի թույլատրվում: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս - 1 կգ-ից:
5	15331166	Վարունգ	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը 8-15 սմ, նեղ մասի տրամագիծը՝ 4-6 սմ, թարմ, ամբողջական, առողջ, չկեղտոտված, առանց մեխանիկական վնասվածքների:
7	15331171	Պղպեղ	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը՝ 12 սմ-ից ոչ պակաս, լայն մասի տրամագիծը 4 սմ-ից ոչ պակաս, կոնաձև, կարճ պտղակոթով: Առողջ, առանց արտաքին և ներքին վնասվածքների, թարմ:
8	15331167	Կանաչի խառը	Կանաչի 4 տարբեր տեսակի՝ 15% ռեհան, 30% մաղադանոս, 30% համեմ, 25% սամիթ, թարմ, կապով կամ քաշով, առանց փչացած ու չորացած մասերի:
10	15331160	Դդմիկ	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը 18 սմ-ից ոչ պակաս և ոչ ավելի 23 սմ-ից, նեղ մասի տրամագիծը 6 սմ-ից ոչ ավել, թարմ, ամբողջական, մաքուր, առողջ, չթոռոմած, գյուղատնտեսական վնասատուներից չվնասված:
14	15331163	Բազուկ	Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 8-12սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 3%:
Մրգեր			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Մթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
28	03222100	Բանան	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը 12 սմ-ից ոչ պակաս, թարմ, մաքուր, առանց մեխանիկական

			մնասվածքների, առանց մնասատուների մնասվածքների և հիվանդությունների:
37	03222134	Սալոր	Թարմ, ամբողջական, հասած, առողջ, մաքուր, առանց մեխանիկական մնասվածքների, առանց մնասատուների մնասվածքների, հիվանդությունների:
39	3222133	Կեռաս	Կեռաս թարմ, ամբողջական, հասած, առողջ, մաքուր, առանց մեխանիկական մնասվածքների, առանց մնասատուների մնասվածքների և հիվանդությունների:
Ընդեղեն, Ձավարեղեն, Մակարոնեղեն			
Ձավարեղեն			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ համապատասխան Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011): Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մթնդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Մթնդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Մթնդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
121	15617000	Ցորենաձավար	Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր տեսակի ցորենից: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %:
123	15619000	Հաճար	Ստացված հաճարի հատիկներից, հատիկների խոնավությունը 15 %-ից ոչ ավելի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %:
125	15613350	Վարսակաձավարի փաթիլներ (հերկուլես)	«Հերկուլեսի» փաթիլներ ստացված հղկված վարսակաձավարի բարձր տեսակի նուրբ թերթիկներից, փաթեթավորումը՝ գործարանային: Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 60 %, պիտակավորված:

ԳՆՈՐԴ

Աշխատակազմի
ղեկավար ..... Ա.Գրիգորյան
/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Տնօրեն ..... Ն. Պետրոսյան
/ստորագրություն/ Կ.Տ

"ՖՈՏՈՆ"
"ФОТОН"
"FOTON"
90036001

Հավելվ...
« 01 » փետրվարի 2018թ. կնք...
«ԱՄՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե1--ՄՏ-9» ծածկագրով պայմանագր...

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	15331142	Կաղամբ	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
5	15331166	Վարունգ	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
7	15331171	Պղպեղ	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
8	15331167	Կանաչի խառը	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
10	15331160	Դդմիկ	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
14	15331163	Բազուկ	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
28	03222100	Բանան	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
37	03222134	Սալոր	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
39	3222133	Կեռաս	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
121	15617000	Ցորենաձավար	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
123	15619000	Հաճար	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
125	15613350	Վարսակաձավարի փաթիլներ (հերկուլես)	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

"ՖՈՏՈՆ" "ФОТОН" "FOTON" 90036001

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

« ԵՐԵՎԱՆԻ «ՄԱՆԿԱՆ ՏՈՒՆ » ՊՈԱԿ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՝ 01.02.2018 ԹՎԱԿԱՆԻ

N «*ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-ՄՏ-9*»

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **« 02 » փետրվարի 2018թ.**

« Երևանի «Մանկան տուն » ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Լ. Կարապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ֆոտոն » ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Պետրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, հիմք ընդունելով 01.02.2018թ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-ՄՏ-9 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.5, 8.5 և 8.13 կետերը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի 3.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

Պայմանագրի գինը կազմում է **720 441 (Յոթ հարյուր քսան հազար չորս հարյուր քառասունմեկ դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

2. Պայմանագրի Հավելված 1-ի չափաբաժին 14-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի 1/1:
3. Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի 2/1:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռքբերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

2. ԱՅԼՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածը կազմված են 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<< Երևանի <<Մանկան տուն>> ՊՈԱԿ	«Ֆոտոն» ՍՊԸ
Ք. Երևան , Ա. Արմենակյան 119	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի
ՀՎՀՀ 01534723	փ.14$_2$., բն.21
<<Հայէկոնոմբանկ >>ԲԲԸ	ՀՎՀՀ՝ 90036001
Հ/Հ 163008104867	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
	Հ/Հ 16044050085000
Տնօրեն ..... Լ. Կարապետյան	Տնօրեն ..... Ս. Պետրոսյան
Կ.Տ. /ստորագրություն/	Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N1/1-ի
«02» «փետրվարի» 2018թ. Համաձայնագրի N1
01 փետրվարի 2018թ. Կնքված
N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-ՄՏ-9» ծածկագրով պայմանագրի
Հավելված N 1-ի

ՀՀ դրամ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը**	ժամկետը**
14	15331163	Բազուկ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	123	37471,95	304,65	ք. Երևան Արմենակ Արմենակյան փող., 119	304,65	Ըստ պատվիրատուի պահանջի՝ գնման հայտի հիման վրա

ԳՆՈՐԴ

<< Երևանի <<Մանկան տուն>> ՊՈԱԿ
Ք. Երևան , Ա. Արմենակյան 119
ՀՎՀՀ 01534723
<<Հայէկոնոմբանկ >>ԲԲԸ
Հ/Հ 163008104867

Տնօրեն ..... Լ. Կարապետյան
Կ.Տ. /ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

«Ֆոտոն» ՍՊԸ
ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի
փ.14շ., բն.21
ՀՎՀՀ 90036001
«ԱՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16044050085000

Տնօրեն ..... Ն. Պետրոսյան
/ստորագրություն/

Հավելված N 2/1-ի
«02» «փետրվարի» 2018թ. Համաձայնագրի N1
01 փետրվարի 2018թ. Կնքված
N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-ՄՏ-9» ծածկագրով պայմանագրի
Հավելված N2-ի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	15331142	Կաղամբ	0	0	10447,8	20895,7	31343,5	41791,3	52239,2	62687,0	73134,8	83582,6	94030,5	104478,3	104478,3
5	15331166	Վարունգ	0	0	4108,4	8216,9	12325,3	16433,8	20542,2	24650,6	28759,1	32867,5	36976,0	41084,4	41084,4
7	15331171	Պղպեղ	0	0	1696,5	3393,0	5089,6	6786,1	8482,6	10179,1	11875,6	13572,2	15268,7	16965,2	16965,2
8	15331167	Կանաչի խառը	0	0	2529,3	5058,6	7587,8	10117,1	12646,4	15175,7	17705,0	20234,2	22763,5	25292,8	25292,8
10	15331160	Դդմիկ	0	0	1195,7	2391,5	3587,2	4783,0	5978,7	7174,4	8370,2	9565,9	10761,7	11957,4	11957,4
14	15331163	Բազուկ	0	0	3747,2	7494,4	11241,6	14988,8	18736,0	22483,2	26230,4	29977,6	33724,8	37472,0	37472,0
28	3222100	Բանան	0	0	42829,8	85659,6	128489,4	171319,2	214149,0	256978,8	299808,6	342638,4	385468,2	428298,0	428298,0
37	3222134	Սալոր	0	0	496,6	993,3	1489,9	1986,6	2483,2	2979,8	3476,5	3973,1	4469,8	4966,4	4966,4
39	3222133	Կեռաս	0	0	3428,5	6857,0	10285,5	13714,0	17142,5	20570,9	23999,4	27427,9	30856,4	34284,9	34284,9
121	15617000	Ցորենաձավար	0	0	476,2	952,3	1428,5	1904,6	2380,8	2857,0	3333,1	3809,3	4285,4	4761,6	4761,6
123	15619000	Հաճար	0	0	299,5	599,0	898,6	1198,1	1497,6	1797,1	2096,6	2396,2	2695,7	2995,2	2995,2
125	15613350	Վարսակաձավարի փաթիլներ (հերկուլես)	0	0	788,5	1577,0	2365,4	3153,9	3942,4	4730,9	5519,4	6307,8	7096,3	7884,8	7884,8
Ընդամենը															720441,0

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ
<< Երևանի <<Մանկան տուն>> ՊՈԱԿ
Ք. Երևան , Ա. Արմենակյան 119
ՀՎՀՀ 01534723
<<Հայէկոնոմբանկ >>ԲԲԸ
Հ/Հ 16300810486700

Տնօրեն ..... Լ. Կարապետյան
Կ.Տ. /ստորագրություն/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ԼՂՀՀ Մարտակերտի մարզ, գ. Սարգսյանի
գ.Հ.1, բն.26
ՀՎՀՀ 90036001
«ԷՅԷՖ Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16044050085000

Տնօրեն ..... Ն. Պետրոսյան
Կ.Տ. /ստորագրություն/